
ՀԱԿԱԴՐՈՒՅԹԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Ա. Ա.

Անցյալ դարի 60-80-ական թվականների հայ քնարերգության մեջ, ի թիվս այլ նորությունների (աշխարհայացքային, թեմատիկ, հերոսի տիպականացման, կառուցվածքային և այլն), նկատելի են նաև լեզվառճական հետաքրքիր իրողություններ, որոնք ուշագրավ են հատկապես հայրենասիրական թեմաներով գրված ստեղծագործություններում:

Մեր կարծիքով՝ այս շրջանի բանաստեղծական խոսքարվեստի հարըստացմանն էապես նպաստել են լեզվի պատկերավորման միջոցներից՝ անձնավորման (հատկապես վերացական գոյականների), իսկ լեզվի արտահայտչական միջոցներից՝ բանաստեղծական հակադրության, մասնավորապես հակադրության ինքնատիպ գործածությունները, որոնց տեսակարար կշիռը նախորդ շրջանի հայ քնարերգության համեմատությամբ զգալիորեն մեծացել է Հ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Վ. Դավթյանի և այդ սերնդի մյուս բանաստեղծների երկերում: Բանաստեղծական հակադրությունն ասելով՝ նկատի ունենք և՛ սյուժետային հակադրությունը, այսինքն՝ գրականագիտական տերմինով ասված՝ կոնֆլիկտը, որը գործածելի է էպիկական մեծածավալ ստեղծագործությունների մեջ, և՛ լեզվի արտահայտչամիջոցներից մեկը, որը սովորաբար կիրառվում է քնարական փոքրածավալ երկերում:

Սակայն, չհաշված հայ ժողովրդի հեռավոր ու մոտ անցյալի մասին գրված պոեմները, որոնցում առկա են էպիկական ժանրին բնորոշ սյուժետային զարգացումներն ու կոնֆլիկտի դրսևորման դասական ձևերը, կարելի է ասել, որ XX դ. 60-80-ական թվականների հայրենասիրական քնարերգության մեջ գոյություն ունի համընդհանուր մի հակադրություն, որի մի բևեռում իր սերնդի հավաքական կերպարը մարմնավորող հայ բանաստեղծի քնարական ես-ն է, իսկ մյուս բևեռում՝ այդ դարասկզբի ողբերգական իրադարձություններից հետո Արևմտյան Հայաստանի և հայկական մյուս տարածքների կորստով պայմանավորված անընդունելի իրականությունը: Օրինակ՝

*Կուզեի նստել մի քարի վրա
Եվ անվերջ նայել իմ Արարատին,
Հարբել հայրենի միրաժով նրա
Եվ հավերժ նայել իմ Արարատին:
... Եվ նստած լռին այդ քարի վրա՝
Անդադար նայեմ իմ Արարատին,
Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա,
Եվ մամռած նայեմ իմ Արարատին¹:*

¹ Շիրազ Հ., Երկերի ժողովածու 5 հատորով, հ. 1, Ե., 1981, էջ 196:

Այս բանաստեղծության մեջ թեև չկան հականիշ բառեր, բայց կա բավական ընդգծված բանաստեղծական հակադրությամբ մի պատկեր, ուր այդ հակադրության բեռը կրողն ընդամենը մեկ բառ է՝ *կուզեի* ըղձական եղանակով արտահայտված բայը:

Նման հոգեվիճակ է ընկած Վ. Դավթյանի հատկապես «Անկեզ մորենի» և «Երկիր գաղտնարան» ժողովածուների բանաստեղծություններից շատերի հիմքում: Օրինակ՝

*Առաջին անգամ աշխարհում տեսած
Իմ առավոտն է այնտեղ մնացել,
Նա, որ բուրում էր իբրև ցորեն հաց
Եվ բուրում իբրև գարնան հող ու ցեղ...
Եվ մնացել է առաջին անգամ
Աշխարհում տեսած իմ աղբյուրն այն ջինջ,
Որից գրնգուն ու անապական
Եվ որից պայծառ չտեսա ոչինչ...²*

Դժվար չէ նկատել, որ Վ. Դավթյանի բանաստեղծության մեջ ևս չկան հականիշներ, սակայն դարձյալ առկա է բանաստեղծական հակադրությունը, որի կառուցվածքային բեռն այս անգամ կրում է *այնտեղ է մնացել* (սահմանից այն կողմ՝ Տ.- Մ. Ա.) բառակապակցությունը: Նույն շարքի մեկ այլ բանաստեղծության մեջ դարձյալ հականիշների բացակայության պայմաններում Վ. Դավթյանին հաջողվում է ստեղծել բանաստեղծական հակադրություն՝ այս անգամ *թվում է* բայի ոճական դիպուկ կիրառմամբ:

*... Այնպես է թվում, թե հեռու-հեռվից
Ինձ ձայն են տալիս:*

*Ու ես չգիտեմ, դա անլսելի
Զնգո ցն է քարի,
Շշո՞ւկը հողի, թե՞ սոսափյունը
Սոսյաց անտառի (17):*

Այս լայնածավալ, ընդհանրական հակադրության հիմքով մտահղացված ստեղծագործություններից շատերը, սակայն, հիրավի բազմաշերտ են ու բազմաձև՝ կախված տվյալ բանաստեղծի քնարական նյութի ընտրության, կերպարի և պատկերի տիպականացման, խոսքարվեստի վարպետության և այլ առանձնահատկություններից: Ավելին, այդ հակադրությունը միշտ չէ, որ նույն ուժգնությունն ունի, քանի որ էապես պայմանավորված է նաև 1950-ական թվականների կեսերից սկսված գրական նոր փուլի՝ ազգային վերագարթոնքի տարիների հասարակական-քաղաքական և գրական տեղաշարժերով ու տվյալ բանաստեղծի աշխարհայացքային փուլերի առանձնահատկություններով: Այսպես, երբեմն նմանատիպ հակադրությունները (հատկապես գրական նոր փուլի առաջին

² Դավթյան Վ., Երկեր 2 հատորով, հ. 1, Ե., 1985, էջ 196: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրում:

տարիներին) դրսևորվում են ընդամենը կորսված հայրենիքի (Վ. Դավթյանի պարագայում՝ նաև ծննդավայրի) գովքով, բնաշխարհի նրբակերտ պատկերներով, իրենց դարավոր օրրանին ջերմ սիրով կապված՝ հայ շինականի արդար աշխատանքի ու վարքուբարքի նկարագրերով: Օրինակ՝

*Այնտեղ՝ արևոտ այն քարափներին
Իմ մանկությունը պիտի դողանջեր,
Թառեր Եփրատի փրփրած թևին
Եվ ընկուզենու կատարից կանչեր:
Կավե կտուրից պիտի գիշերով
Ջրվորի տաղին նա ականջ դներ,
Երկնքից բռներ ասույաներ ու շող
Եվ այդ ամենը ծոցն առած, քներ... (30):*

Ինչպես մեջբերված նախորդ բանաստեղծություններում, այստեղ ևս բանաստեղծական հակադրության ներքին իմաստակիրը բայն է՝ այս անգամ դրված հարկադրական անցյալով, որը, ինչպես հայտնի է, հաճախ ցույց է տալիս կատարվելիք գործողություն, որը, սակայն, չի կատարվել (պիտի խոսեր, բայց նախընտրեց լռել): Թեև Վ. Դավթյանը չի օգտագործել գործողության հակադրություն ցույց տվող շաղկապ, որին հաջորդող նախադասությամբ միայն կգիտակցվեր բուն հակադրությունը, սակայն հայ ընթերցողի համար միանգամայն տեսանելի է այն հակադրությունը, որ գոյություն ունի 1915 թ. եղեռնից հետո իր ծննդավայրը հավերժ կորցրած բանաստեղծի և նրա երազանքների միջև: Ավելին, երբեմն Վ. Դավթյանի բանաստեղծություններում նույնիսկ վերը նշված մեկական բառով արտահայտված հակադրություններն անգամ չկան, սակայն կորսված հայրենիքի զուտ բնապատկերային նկարագրությունները, որոնք հյուսվում են անափ կարոտով ու թախիծով, դարձյալ հայ ընթերցողի մեջ թողնում են բանաստեղծական հակադրության տպավորություն:

*Եվ հիմա այնտեղ խորունկ մի ձորում
Գարունն է վառում քնքշանքն իր վայրի,
Ձնծաղկի աչքից կապույտ է ծորում,
Կապույտով լցնում անդունդն ամայի:
Աղբյուրը ժայռից ներքն է կախում
Իր հեկեկանքն ու լույսը իր թախծի,
Եվ պատառոտված ժայռի երախում
Շվար դողում է մենավոր մի ծիլ (31):*

Մինչդեռ հայոց պատմությանն անտեղյակ ընթերցողը հազիվ թե ըմբռնի նման գործերում առկա հակադրությունը: Ավելի շուտ նա կնկատի այն հանրահայտ հակադրությունը, որը սովորաբար ընկած է մանկության թեմաներով գրված բանաստեղծությունների հիմքում, այսինքն՝ հակադրություն՝ իրականության և անցած-գնացած մանկության երազային օրերի միջև:

Միայն 1960-ական թվականներից սկսած՝ հատկապես 1965 թ. ապրիլի 24-ից հետո գրված երկերում բանաստեղծական հակադրությունը ձեռք է բերում մեծ ուժգնություն ու դառնում տիրապետող հայ պատմահայրենասիրական քնարերգության մեջ: Հենց այս շրջանից էլ սկսվում են նաև հակադրույթի՝ որպես լեզվի արտահայտչական միջոցի առավել հաճախակի և բազմաբնույթ գործածությունները: «Հակադրույթը,- գրքում է ռուս լեզվաբան Դ. Ռոզենտալը,- դարձվածք է (*ооборот*), որի մեջ խոսքի արտահայտչականությունը ուժգնացնելու նպատակով կտրուկ հակադրվում են հակադիր հասկացությունները»³: Անշուշտ, հակադրույթը դարձվածք անվանելը խիստ պայմանական է, որովհետև, ինչպես հայտնի է՝ հակադրույթը (անտիթեզ) շեշտված հակադրությունն է՝ հականիշ նախադասությունների, բառակապակցությունների և հատկապես հականիշ բառերի գործածությամբ: Կարծում ենք՝ առավել ընդունելի է հակադրույթը դիտել որպես ոճական բանադարձում, «որի շնորհիվ հատկապես գեղարվեստական խոսքում, հաճախ նաև առօրյա-խոսակցական լեզվում խոսքին հաղորդվում է արտահայտչական երանգավորում:

Հակադրույթը առավել ևս գործածական է չափածո ստեղծագործություններում: Երբեմն նույնիսկ ամբողջ բանաստեղծությունը կարող է կառուցվել հակադրույթի սկզբունքով»⁴:

Հակադրույթի կառուցվածքային բազմազանության օգտին է նաև հետևյալ միտքը. «Հակադրույթներն հանդես են գալիս միևնույն համա-տեքստում և արտահայտչական ու կառուցվածքային կողմով բազմիմաստ են: Ընդ որում, հակադրվում են ոչ միայն տարբեր առարկաներ ու երեվոյթներ, այլև միևնույն երևույթի, առարկայի տարբեր կողմեր ու հատկանիշներ: Խոսքի մեջ հակադրույթներ կարող են ստեղծվել նաև ամբողջական միավորյալ նախադասության բաղադրիչների միջև»⁵:

Հակադրույթի կիրառման այս բոլոր ձևերն էլ բնորոշ են նշված շրջանի հայ քնարերգությանը, այդ թվում՝ Վ. Դավթյանի ստեղծագործություններին: Օրինակ՝

*Թեկուզ և գիտեմ, որ տեսիլք է սա,
Որ այն աշխարհը հեռու է ու փակ,
Բայց միևնույնն է, ճանապարհ, սուրա՛,
Սլացիր իբրև հրեղեն պապակ (40):*

*Իսկ ես ծարավ էի սաստիկ...
Այրվում էին շուրթերս չոր...
Բայց արևը վերից խանձում,
Ողողում էր
Ինձ հրեղեն իր քրքիջով (42):*

³ Розенталь Д. Э., *Практическая стилистика русского языка*, М., 1987, с. 385.

⁴ Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Ե., 2003, էջ 235-236:

⁵ Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989, էջ 164:

Այս օրինակներում իրար են հակադրված հակադարձ հիմունքի կառույցով նախադասություններ:

... Դարեր են գալիս,
Գնում են դարեր,
Եվ ապրում էս դու
Քո անմեկնելի ըմբոստ հեզությամբ (175):

Իսկ այս դեպքում հակադրության ուժգնությունը պարփակված է ընդամենը *ըմբոստ հեզությամբ* անվանական բառակապակցության մեջ, որը ոչ թե օբյեկտի (սրամիտ անմտության) սովորական դրսևորում է, այլ բավական մոտ է հակադրության:

Քանի որ հակադրության ստեղծման բուն ատաղձը հականիշ բառերն են, փորձենք վերհիշել դրանց տեսակները և տեսենք, թե որքանով է Վ. Դավթյանին հաջողվել հականիշների տարբեր տեսակների գործածությամբ բանաստեղծական հակադրություններ ստեղծել: «Հականիշ բառերը,- գրում է Ա. Մարությանը,- դրվելով իրար կողքի և գործածվելով խոսքային նույն միջավայրում, դառնում են բառիմաստի ընդգծման միջոց և ուշադրություն են գրավում»⁶:

Հականիշ բառերը բաժանվում են երկու հիմնական խմբի: Առաջինը լեզվական հականիշներն են⁷, որոնք ինքնին հակադիր իմաստներ են արտահայտում՝ անկախ խոսքային համատեքստից: Սրանք, որպես կանոն, նույն խոսքամասային պատկանելությունն ունեն և հիմնականում առար-կայի կամ գործողության հատկանիշ ցույց տվող բառեր են: Լեզվական հականիշները կարող են լինել և՛ տարարմատ, օրինակ՝ սև-սպիտակ, բարձր-ցածր, ազնիվ-խարդախ, արագ-դանդաղ, բարեկամաբար-թրջնամաբար, և՛ նույնարմատ բառեր, որոնցից մեկը կազմված է ժխտական ածանցով: Օրինակ՝ կամեցող-չկամ, շնորհալի-ապաշնորհ, պատեհ-անպատեհ, գիտուն-տգետ, բախտավոր-դժբախտ:

«Ձնից ձերմակ է
Քո թևը, կոռ ինկ,
Միրտդ ամպի պես,
Ա՛խ, սև է, կոռ ինկ,
Դու զույգ գնացիր,
Մենակ էս գալիս,
Ո՛ւր է, ա՛խ, ո՛ւր է
Քո սերը, կոռ ինկ» (23):

Այս հակադրությամբ մտահղացված է *ձերմակ-սև* և *զույգ-մենակ* լեզվական հականիշների գործածությամբ: Սակայն զուտ լեզվական հակա-նիշների կիրառությամբ հակադրությունները սովորաբար չունեն խոսքի այն դիպուկությունն ու տարողունակությունը, որ բնորոշ է խոսքային հականիշներով

⁶ Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 173:

⁷ Լեզվական հականիշների տեսակների մասին (*բուն, բացարձակ և ժխտական*, ինչպես նաև *նույնարմատ* և *տարարմատ*) մանրամասն տե՛ս Եզեկյան Լ., նշվ. աշխ., էջ 233-234:

արտահայտվածներին: Իհարկե, լինում են դեպքեր, երբ հեղինակային հականիշները ժամանակի ընթացքում ձեռք են բերում նաև լեզվական հականիշի արժեք: Օրինակ՝ «Լաւ է կոյր *աչօք*, քան կոյր *մոտօք*»: Մակայն նման փոխանցումները խիստ հազվադեպ բնույթ ունեն, և մեր ուսումնասիրած շրջանի քնարերգության խոսքարվեստում այդպիսի օրինակներ չեն հանդիպել:

Բանաստեղծական խոսքի մեջ առավել տպավորիչ ու պատկերավոր են խոսքային կամ համատեքստային հականիշներով ստեղծված հակադրությունները, երբ հականիշ զույգեր են կազմում լեզվական համակարգում հակադիր իմաստներ չունեցող և միայն տվյալ տեքստում հեղինակի կողմից որպես հականիշներ գործածված բառերը՝ հեղինակային հականիշները: Այս իմաստով անկրկնելի պատկերների վիթխարի քանակություն է սփռված նշված սերնդի լավագույն բանաստեղծներից մեկի՝ Հ. Շիրազի քնարերգության մեջ: Բերենք միայն մեկ օրինակ՝

*Ինչպե՞ս լռեմ՝ այսքան մոտ եմ Մասիսին,
Այսքան մոտ եմ, բայց կարոտ եմ Մասիսին:
Խաղաղությո՛ւն, տե՛ս քեզ ինչքան եմ պաշտում,
Որ չեմ գոռում, թե վառող դ եմ... Մասիսին⁸:*

Այս քառատողում հակադրություն ուժգնացնում են ոչ միայն *լռել* և *գոռալ* լեզվական հականիշները, այլև հատկապես *մոտ-կարոտ* և *խաղաղություն-վառող* համատեքստային հականիշները: Ընդ որում, հետաքրքիրն այն է, որ ոչ միայն քառատողն ամբողջությամբ ինքնատիպ հակադրույթ է, այլև առանձին-առանձին հակադրություններ են և՛ առաջին, և՛ երկրորդ երկտողերը: Համատեքստային հակադրություններով մտահղացված պատկերներ շատ կան նաև Վ. Դավթյանի ստեղծագործություններում: Օրինակ՝

*Ամպել էին, մթնել էին
Դեմի լեռները,
Պարան-պարան կապում էին,
Ա՛խ, մեր բեռները (24):*

Այստեղ հակադրույթ են ստեղծում *լեռները* և *բեռները* բառերը, որոնք լեզվական համակարգում ոչ մի հականշություն չունեն: Բայց բանաստեղծին հաջողվել է այս և հետագա քառատողերում մնայուն արժեքներ խորհրդանշող բառերը՝ *լեռները*, *տունը*, *գետը* և այլն, հակադրել մանր-մունր կենցաղային իրերին՝ *բեռները*, *աման-չամանը*, *վերմակը*, *բարձը*, *պղինձը*՝ ստեղծելով բավական ընդգծված հակադրույթ:

Նկատենք, որ այս բանաստեղծության մեջ օգտագործված է նաև հակադրութի մի ինքնատիպ տեսակ. որպես հականիշներ օգտագործված են ոչ միայն մեկական բառեր, այլև բառաշարքեր.

*Կապում էին աման – չաման
Ու հին կարպետը,*

⁸ Շիրազ Հ., նշվ. աշխ., հ. I, էջ 315:

*Թողնում էին մեր թթենին,
Մեր տունն ու գետը:*

*Կապում էին վերմակ ու բարձ
Ու հին պղինձը,
Թողնում էին ոսկե առուն,
Մեր դադան ու սինձը:*

*Դարսում էին, կապում էին
Մեր ճամփի հացը,
Թփերի տակ թողնում էին
Ծիծաղս ու լացս (25):*

Հակադրությամբ մտահղացված ինքնատիպ պատկեր են ներկայացնում «Անկեզ մորենի» բանաստեղծության վերջին տողերը, ուր *այրվում է* ստորոգյալով նախադասությանը հակադրված են *չկա մոխիր, չկա սպառում, չկա վախճան* նախադասությունները:

*Անկեզ մորենին այրվում է, այրվում,
Եվ չկա մոխիր,
Չկա սպառում և չկա վախճան... (62):*

Հետաքրքիր հնարանք է, երբ հակադրությամբ ստեղծելիս, որպես հականիշներ օգտագործվում են ոչ միայն լեզվական համակարգում իրար չհակադրվող բառեր, այլև նույն առարկայի կամ հատկանիշի բառային տարբերակներ (նույն առարկայի տարբեր ծավալներ կամ նույն հատկանիշի տարբեր աստիճաններ): Բանաստեղծական նման կառույցներով առավել հարուստ են սերնդի մյուս բանաստեղծների ստեղծագործությունները: Օրինակ՝ «Թող հառնեն նահատակ հազարներն ազգերի՝ ծով էին՝ կաթիլին գոհ դարձան» (Հ.Շիրազ): Իսկ Պ. Սևակը հականշային զույգեր է կազմում նույնիսկ նույն բառի նրբերանգային տարբեր գործածություններով: Օրինակ՝ «Մարդ կա ելել է շալակն աշխարհի, մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում», «Բարեխոս եղիր իմ և ի՛մ միջև...»:

Նույն առարկայի տարբեր ծավալային աստիճաններն իրար հակադրելու քիչ, բայց ինքնատիպ դեպքեր կան նաև Վ. Դավթյանի քնարերգության մեջ.

*Դարե՞ր են անցել, թե՞ ակնթարթ ու վայրկյան է թնել
Արարատ լեռան լուռ հայացքի տակ... (158)*

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Վ. Դավթյանի քնարերգության մեջ ավելի հաճախ հականիշ զույգերն ունեն նույն խոսքամասային պատկանելությունը: Նկատելի է նաև, որ այդ հականիշները սովորաբար շարահյուսական նույն պաշտոններն ունեն: Օրինակ՝

*Շունը կլանչում, շեմքը թողնում էր,
Փաթաթվում տատիս, տխուր ոռնում էր:
Մերթ վազում դեպի մեր քարավանը,
Մերթ ետ էր դառնում, պառկում դռանը (27):
Իսկ կործանված վանքի եղինջներում շաղոտ*

Արթնանում է հանկարծ մի մոլորված աղոթք,
 Եղինջներից այրում իր շրթունքներն անեղծ,
 Քարեքար է զարկվում ու դառնում է անեծք (37):
 Ֆիդայիները բոլոր լեռներից տուն են դարձել,
 Եվ ափերի մեջ նրանց մաճն է նորից քարացել (16):
 Մանուկն ուզում է
 Ոտքի փուշն հանել,
 Բայց մինչև օրս չի կարողանում (28):

Առաջին մեջբերման մեջ հականիշներ են քարավան-ը և դուռ-ը թանձրացական գոյականները (երկուսն էլ արտահայտում են տեղի գաղափար), երկրորդում՝ աղոթք և անեծք վերացական գոյականները (երկուսն էլ՝ ենթակա), երրորդում՝ ֆիդայիներ-ը (ասել է թե՛ զենք կրող) և մաճը գոյականները (երկուսն էլ՝ ենթակա), չորրորդում՝ ուզում է և չի կարողանում բայական ստորոգյալները:

Սակայն Վ. Դավթյանի քնարերգության մեջ կան նաև մեծ թվով հակադրություններ, որոնցում հակադրություն արտահայտող բառերը միշտ չէ, որ նույն խոսքի մասին են պատկանում կամ շարահյուսական նույն պաշտոնն ունեն: Այդպիսի հակադրույթ պարունակող բանաստեղծական պատկերները սովորաբար առավել դիպուկ ու տարողունակ են և ոճական մեծ արժեք են հաղորդում քնարական խոսքին: Բերենք նման հակադրությունների մի քանի օրինակներ:

- Հիստ'ւս, բոբիկ Հիստ'ւս,
 Այստեղ փուշ է ու քար,
 Եվ դու իզուր, Հիսուս,
 Այս երկիրը եկար (22):

Այստեղ հակադրության մի բևեռում բոբիկ ածականով արտահայտված որոշիչն է, մյուսում՝ փուշ և քար գոյականները, որոնք ստորոգելիներ են:

Ահ, այս քարերը,
 Համր քարերը...
 Ես հեռու – հեռվից լսում եմ ասես
 Նրանց հառաչն ու ցավի քրքիջը...
 Ինչ ահավոր է
 Համրերի ճիչը... (33):

Այս անգամ համր ածականին, որը որոշիչ է, հակադրված են հառաչն ու քրքիջը գոյականները, որոնք ուղիղ խնդիրներ են, իսկ վերջին տողում հակադրույթ են ստեղծում համրերի հատկացուցիչը և ճիչը հատկացյալը:

Կանգնել եմ քո դեմ, չգիտեմ սակայն,
 Քե՞զ եմ լուռ դիտում,
 Թե՞ թափառում եմ էությանս մեջ... (171):

Այս հատվածում էլ քեզ դերանվանը հակադրված է էություն գոյա-կանը:

Եփրատի խուլ գոռոց, ճանապարհներ լռած,
 Ու ոչ մեկը չկա, որ հասկանա նրանց (37):

Առաջին տողում հակադրությամբ կառուցված է *գոռոց* գոյականի և *լռած* դերբայի հակադրությամբ, իսկ այդ տողին հակադրված է երկրորդ տողն ամբողջությամբ:

*Դու այսքան մոտիկ,
Այսքան նյութեղեն՝
Եվ սակայն անուրջ,
Որ անմատույց է
Ու խոսում է լռի իմ արյունի հետ* (176):

Այս դեպքում էլ *մոտիկ* մակբայի և *նյութեղեն* ածականի հականիշներն են *անուրջ* գոյականը և *անմատույց* ածականը:

Ամփոփելով նշենք, որ գեղարվեստական խոսքում բանաստեղծական հակադրությունների, մասնավորապես հակադրությունների գործածությունները թեպետ նորություն չեն, սակայն XX դ. 60-80-ական թվականների հայ քնարերգության մեջ, հատկապես պատմահայրենասիրական թեմաներով գրված գործերում էապես ավելացել է դրանց կիրառության տեսակարար կշիռը: Կարծում ենք՝ դրա շնորհիվ զգալիորեն շահել են և՛ բանաստեղծական պատկերը, և՛ երկի գաղափարական բովանդակությունը, որովհետև նախ՝ ինչպես լեզվի պատկերավորման և արտահայտչական մյուս միջոցները, այնպես էլ հակադրությամբ ոչ միայն ոճական մեծ արժեք և հուզականություն են հաղորդում բանաստեղծական պատկերին, այլև այն դարձնում առավել հակիրճ, տարողունակ և բովանդակալից: Բացի այդ, հակադրության նրբերանգային տարբեր գործածությունները օգնել են նշված սերնդի հայ բանաստեղծներին շատ հաճախ վարպետորեն գաղտնագրել բուն ասելիքը՝ խուսափելով այդ տարիների գրաքննությունից:

АНТИТЕЗА В ПОЭЗИИ В. ДАВТЯНА

ТЕР-МИНАСЯН А. А.

Резюме

В 60-80 гг. XX в. в стилистической системе армянской лирики обозначилась тенденция перегруппировки понятий в *системе средств образности и средствах выразительности языка*.

В произведениях поэтов этого периода – О. Шираза, С. Капутикян, П. Севака и др. – стали заметней качественно новые проявления *олицетворения абстрактных существительных и поэтического противопоставления*, одной из ярких разновидностей которого является *антитеза*. При этом очевидна новизна такого применения поэтического противопоставления, которое присуще только указанному периоду армянской историко-патриотической лирики. Эта форма противопоставления, обусловленная тематикой, находит своеобразное отражение также в творчестве В. Давтяна.